ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 51

«11» հունիսի - 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2012 թվականի փոփոխված բյուջեն, հաստատված 2012 թվականի մայիսի 31-ի ավագանու թիվ 6 նիստի 24-Ն որոշմամբ:

Առդիր « 41 » թերթ:

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ———————— Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

5379-12
«11» 06 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ 24-Ն

«31» մայիսի 2012թ. | թիվ 6 նիստ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 62-րդ հոդվածի հինգերորդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի «2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը.

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Վ. Հակոբյան | | | |
| Մ. Գրիգորյան | | | |
| Ա. Սիմոնյան | | | |
| Գ. Աբրոյան | | | |
| Գ. [illegible] | | | |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ [illegible] Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2012 թվականի մայիսի «31»

գ. Լուսագյուղ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի մայիսի 31-ի
թիվ 6 նիստի N 24-Ն որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. 2012 թվականի ոչ ֆինանսական ակտիվների՝ հիմնական միջոցների և հողի իրացումից մուտքերը հաստատել ընդամենը 14210490 դրամ /հատված 3, տող 6000/, որից հողի իրացումից մուտքը՝ 11606490 դրամ, հիմնական միջոցների իրացումից մուտքը՝ 2604000 դրամ:

2. 2012 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություններ և լրացումներ

1/ գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 3 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի «923400» թիվը փոխարինել «0» թվով.

2/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի թիվը հաստատել 14133890 դրամ.

3/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5134 հոդվածի թիվը հաստատել 1000000 դրամ.

4/ 2012 թվականի վարչական մասի պահուստային ֆոնդերի հաստատված «912700» թիվը փոխարինել «462700» թվով.

5/ գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 3 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածի թիվը հաստատել 200000 դրամ.

6/ գործառական դասակարգման բաժին 06, խումբ 3, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածի «500000» թիվը փոխարինել «750000» թվով:

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N 24-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 62-րդ հոդվածի հինգերորդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի «2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները:

2. 2012 թվականի ոչ ֆինանսական ակտիվների՝ հիմնական միջոցների և հողի իրացումից մուտքերը հաստատել ընդամենը 14210,490 հազար դրամ /հատված 3, տող 6000/, որից հողի իրացումից մուտքը՝ 11606,490 հազար դրամ, հիմնական միջոցների իրացումից մուտքը՝ 2604,0 հազար դրամ:

3. 2012 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություններ և լրացումներ.

1/ գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 3 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի հատկացված 923,4 հազար դրամից պակասեցնել 923,4 հազար դրամ, հաստատել 0 դրամ.

2/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածի գումարը հաստատել 14133,89 հազար դրամ.

3/ գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5134 հոդվածի գումարը հաստատել 1000,0 հազար դրամ.

4/ 2012 թվականի վարչական մասի պահուստային ֆոնդերի հատկացված 912,7 հազար դրամից պակասեցնել 450,0 հազար դրամ, հաստատել 462,7 հազար դրամ.

5/ գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 3 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածի գումարը հաստատել 200,0 հազար դրամ.

6/ գործառական դասակարգման բաժին 06, խումբ 3, դաս 1 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածի հատկացված 500,0 հազար դրամին ավելացնել 250,0 հազար դրամ, հաստատել 750,0 հազար դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը։

Իսկականի հետ ճիշտ է՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------------------------- Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ